

գիպտացի Եկեղեցւոյ մէջ քահանայ ձեռնադրուած է Սարգիս Լ.Ր.Ք. Սարաֆեանէ. նոյն տարին դարձած է Մարտին եւ ժողովուրդեան ծառայած: 1767ին գրած է գեղեցիկ Մեկնութիւն մը Ս. Պատարագի (օրինակ մը Մտորն. Անտ. Թ. ՄկԳ.): 1768ին Մարտինի Առաջնորդ ընտրուեցաւ, եւ կղեմէս ԺԿ Ս. Քահանայապետէն հաստատուելով 1768 Ապր. 30ին, նոյն տարին Սեպտ. 4ին Արքեպ. ձեռնադրուեցաւ ի Զմմաստ Կիլիկիոյ Միքայէլ Պետրոս Գ. կաթողիկոսէն Հայոց Ուղղափառաց: 1869ին Օգ.ին Զմմաստ գնաց եւ Թէ կաթողիկոսին եւ Թէ Ս. Քահանայապետին հրաժարական մատուցանելով՝ ընդունուեցաւ հրաժարականը: 1770ին Հոռմ հաստատուեցաւ, ուր գրքեր գրեց եւ Թարգմանութիւններ ըրաւ: Վախճանած է 58 տարեկան 1773 Ապր. 4ին եւ Թաղուած Ս. Մարիամ Եգիպտացի եկեղեցին:

Տապանագիրը հետեւեալն է՝

ԱՍՏ ԵՆ ՈՍԿԵՐՔ ԱՌՆ ԻՄԱՍՏԻ
ՄԵՐՏԻՆԵՅԻ ՎԱՐԴԱՊԵՏԻ
ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹԱՍՊԱՍ ԿՈԶԵՑԵԼՈՅ
ՄԵԾ ՄԵԼԳՕՆ ԵՂԲՕՐ ՈՐԴԻ
ՍԱ Ի ՀՌՕՄ ՅԻՄԱՍՏ ՄԱՐԶԻ
Ի ՓՐՈՓԱԿԱՆՏԱ Ի ԴՊՐՈՅԻ
ԱՊԵ ԵՊՍ ՕԾԵԱԼ

ՅԻԻՐ ԲԵՂԱՔԻ ՀՈՎԻԻ ԿԱՐԳԻ
ՅԵՏՈՅ ԵԿԵԱԼ ՎԱՄՆ ՈՒՍՏԻ
ԳԱՅ Ի ՀՌՕՄ ԱՍՏ ԲՆԵԿԻ
ՅԻՍՈՒՆ ԵՒ Ը ԱՄՍ ԼՅԵԱԼ
ՆԱ Ի ԿԵՆԱՅ ԱՍՏԻ ՓՈՒԻ